ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ

Ք.Երևան 16.05.2024թ.

«Հայաստանի ֆիզիկական կոըլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երևան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին 20 անդամներից 12-ը՝

Կարեն Գիլոյանը – ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Գոհար Մամիկոնյանը – ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ

Սերգեյ Աբրահամյան – ՀՀ ԿԳՄՍ նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիրակության բաժնի պետ

Արսեն Հակոբյանը – ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ

Դավիթ Մոսինյանը – «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿԻ–ի տնօրեն

Լիանա Դուդուկչյանը – Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի ուսանող

Ժիրայր Դավեյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Գայանե Չիլոյանը - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրանտ

Հեռախոսակապի միջոցով նիստին մասնակցել են՝

Սամվել Գևորգյանը - Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Ռոբերտ Խաչատրյանը – Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ

Էդուարդ Քալանթարյանը – Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան

Լաուրա Միրզոյանը – Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Բացակայում էին՝

Արսեն Միխայլովը – ՀՀ վարչապետի օգնական

Հարություն Յավրյանը – ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Անահիտ Բարսեղյանը – Հայաստանի ֆիզիկական կոըլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Օրակարգ

1. «Հայաստանի ֆիզիկական կոըլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրական մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան կողմից ՀՖԿՍՊԻ–ին տրամադրված դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ հարցերի քննարկում, արդյունքների ներկայացում:
3. Այլ հարցեր:

Նախքան օրակարգի հաստատումը ՀԽ անդամ Գոհար Մամիկոնյանն առաջարկեց քննարկել նաև ՀՖԿՍՊԻ–ի արտաքին աուդիտն իրականացնող ընկերության ընտրության գործընթացը կազմակերպելու հարցը:

Օրակարգի հաստատման վերաբերյալ հարցը ՀԽ նախագահ Կարեն Գիլոյանը դրեց քվեարկության:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 1-ին հարց

Զեկուցող՝ Տիգրան Սիմոնյան

ՀՖԿՍՊԻ–ի Կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հարց ներկայացնելով ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը նշեց բուհի կանոնադրությունը ՀՀ կառավարության որոշմանը համապատասխանեցման անհրաժեշտության մասին և առաջարկեց ՀՖԿՍՊԻ–ի կանոնադրության մեջ Հոգաբարձուների խորհրդի անդամների քանակը սահմանող դրույթի մեջ «24 հոգի» բառերի փոխարեն գրել «20 հոգի» բառերը:

Հարցը դրվեց քվեարկության և ընդհունվեց միաձայն:

Որոշվեց՝ փոփոխություն կատարել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կանոնադրության մեջ՝ «24-հոգի» բառերը փոխարինել «20-հոգի» բառերով:

Օրակարգի հարց 2

Զեկուցող՝ Տիգրան Սիմոնյան,

Որպես համազեկուցող ելույթ ունեցավ արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր Անժելա Նուշիկյանը:

Զեկուցողները խոսեցին Ճապոնիայի դեսպանատան կողմից Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտին տրամադրված «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ձյուդոյի մարզադահլիճի վերանորոգման նպատակով տրամադրված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընթացք և աշխատանքների ավարտի հետ կապված խնդիրների վերաբերյալ:

Ներկայացվեցին խնդիրներ, որոնք առաջացել են շինարարական աշխատանքների կապալառու կազմակերպության, տեխնիկական վերահսկողությունը, ինչպես նաև հեղինակային վերահսկողությունն իրականացվող կազմակերպությունների աշխատանքներում առկա անհամապատասխանությունների հետևանքով:

Հարցը դրվեց քվեարկության և ընդհունվեց միաձայն:

Որոշվեց՝ Վերհանված խնդիրները գնահատելու նպատակով ներգրավել անկախ աուդիտորի, որից հետո որոշել ծրագիրն ավարտին հասցնելու հնարավոր ունիները:

Օրակարգի հարց 3 (այլ հարցեր)

Զեկուցո՝ղ Տիգրան Սիմոնյան

Ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը ներկայացրեց ՀՖԿՍՊԻ-ում արտաքին աուդիտ անցկացնելու վերաբերյալ հայտարարված մրցույթի արդյունքերի մասին, նշելով, որ մրցույթին մասնակցել է մեկ կազմակերպություն, որն էլ համապատասխանել է բուհի կողմից սահմանված պահանջներին և հանդիսանում է մրցույթի հաղթող: Խնդրեց հաստատել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը և թույլ տալ ռեկտորի ժ/պ-ին վերջինիս հետ կնքելու պայմանագիր:

Հարցը դրվեց քվեարկության և ընդհունվեց միաձայն:

Որոշվեց՝ թույլ տալ ռեկտորին՝ արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության հետ կնքելու ծառայությունների մատուցման պայմանագիր

ՀԽ նախագահ՝ Գիլոյան Կարեն

ՀԽ քարտուղար՝ Չիլոյան Գայանե